ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01 հոկտեմբերի 2024թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 21-ի № 336-Ա որոշումը և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 29-ի № 323-Ա հրամանը՝ ս. թ. սեպտեմբերի 9-ից մինչև 20-ը ներառյալ.

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի (իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Հարություն Ալեքսանյանի (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ գլխավոր մասնագետ Սամվել Սահակյանի, գլխավոր մասնագետ Արմեն Հակոբյանի, ֆինանսական վարչության պետ Համլետ Ստեփանյանի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հրաչյա Վարդանյանի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Արթուր Հակոբյանի, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Կամո Թումոյանի, ՔՀԵԿՎ Հողաշինության բաժնի պետ Գուրգեն Ավետիսյանի, ՔՀԵԿՎ Հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Հակոբյանի, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Շավարշ Արտաշյանի (աշխատանքային խմբի անդամներ) կողմից իրականացվեց իրավական հսկողություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի <<Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 03-Ն հրամանով հաստատված իրավական հսկողության հարցաշարով, ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում:

1. Իրավական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների, ինչպես նաև հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Իրավական հսկողության արդյունքների և հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեմ՝ Ջրվեժ համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյան:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ղեկավարին:

Աշխատանքային խումբ՝

ղեկավար՝ Հ. Ալեքսանյան

անդամներ՝ Ս. Սահակյան

Հ. Ստեփանյան

Ա. Հակոբյան

Հ. Վարդանյան

Գ. Ավետիսյան

Ա. Հակոբյան

Հ. Հակոբյան

Կ. Թումոյան

Շ. Արտաշյան

Ջրվեժ համայնքի ղեկավար՝ Ն. Սանթրոսյան